ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«19» Մարտի 2014թ. N 64

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ (ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ) ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի ներմարզային կանոնավոր երթուղիների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի 2014 թվականի մարտի 6-ի թիվ 2 արձանագրությունը և մրցութային ամփոփ թերթիկները.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի ընդունած արձանագրությունը՝ 2014 թվականի մարտի 6-ին անցկացված մրցույթի վերաբերյալ:
2. Թույլատրել՝

   1) «Էջմիածնի ԲՈՒԱՏ» բաց բաժնետիրական ընկերությանը սպասարկելու «Վաղարշապատ-Արմավիր» ավտոբուսային երթուղին 3 (երեք) տարի ժամկետով:

   2) «Էջմիածնի ԲՈՒԱՏ» բաց բաժնետիրական ընկերությանը սպասարկելու «Վաղարշապատ-Ամբերդ» ավտոբուսային երթուղին 3 (երեք) տարի ժամկետով:

   3) «Էջմիածնի ԲՈՒԱՏ» բաց բաժնետիրական ընկերությանը սպասարկելու «Վաղարշապատ-Գայ» ավտոբուսային երթուղին 3 (երեք) տարի ժամկետով:

   4) «Ճամփորդ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը սպասարկելու «Արմավիր-Դալարիկ» ավտոբուսային երթուղին 4 (չորս) տարի ժամկետով:

3. <<Վաղարշապատ-Զվարթնոց>> ավտոբուսային, <<Վաղարշապատ-Տարոնիկ>> ավտոբուսային և միկրոավտոբուսային, <<Վաղարշապատ-Արևաշատ>> ավտոբուսային, <<Արմավիր-Բագարան>> ավտոբուսային և միկրոավտոբուսային, <<Արմավիր-Շենիկ>> միկրոավտոբուսային երթուղիների մրցույթը համարել չկայացած, մրցույթին հայտեր չլինելու պատճառով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***